

ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ  
ST. KEVORK ARMENIAN CHURCH



ԿԻՐԱԿԼՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ

Sunday Bulletin

ԿԻՐԱԿԻ, Օգոստոս 18, 2019

SUNDAY, August 18 2019

9215 SE Church St., Clackamas, OR 97015

# ՃԱՇՈՒ ԱՎԵՏԱՐԱՆ

Ղուկաս 1:39-56

Այդ օրերին Մարիամը վեր կացաւ եւ շտապով գնաց Յուդայի լեռնային շրջանի քաղաքներից մէկը, մտաւ Զաքարիայի տունը ու Եղիսաբեթին ողջոյն տուեց: Եւ երբ Եղիսաբեթը Մարիամի ողջոյնը լսեց, մանուկը խաղաց նրա որովայնում, եւ Եղիսաբեթը լցուեց Սուրբ Հոգով եւ բարձր ձայնով աղաղակեց ու ասաց. «Օրհնեա՛ւ էս դու կանանց մէջ, եւ օրհնեա՛ւ լ է քո որովայնի պտուղը: Որտեղի՞ց ինձ այս ուրախութիւնը, որ իմ Տիրոջ մայրը ինձ մօտ գայ. որովհետեւ ահաւասիկ, երբ քո ողջոյնի ձայնը հասաւ իմ ականջին, մանուկը ցնձալով խաղաց իմ որովայնում: Եւ երանի՛ նրան, որ կը հաւատայ, թէ Տիրոջ կողմից իրեն ասուածները կը կատարուեն: Եւ Մարիամն ասաց.Իմ անձը կը փառաւորի Տիրոջը,եւ իմ հոգին ցնձաց իմ Փրկիչ Աստուծով, որովհետեւ նա իր հայեացքը դարձրեց իր աղախնի խոնարհութեան վրայ: Եւ ահա, այսուհետեւ բոլոր սերունդները ինձ երանի կը տան,որովհետեւ ամենագոր Աստուած մեծամեծ գործեր արեց ինձ համար,եւնրա անունը սուրբ է:Նրա ողորմութիւնը սերնդից սերունդ իր երկիւղածների վրայ է:Նա իր բազուկով գործութիւն ի գործ դրեց, ցրեց ամբարտաւաններին իրենց սրտի խորհուրդներով. հզօրներին տապալեց իրենց աթոռներիցեւ բարձրացրեց խոնարհներին:Քաղցածներին լիացրեց բարիքներովեւ մեծահարուստներին ձեռնունայն արձակեց: Նա պաշտպան ցանգնեց իր ծառային՝ Բարայէլին, յիշելով իր ողորմութիւնները. ինչպէս ասել էր մեր հայրերին՝ Աբրահամին եւ նրա սերնդին, յաւիտեանէ:

Մարիամը գրեթէ երեք ամիս մնաց Եղիսաբեթի մօտ եւ դարձաւ իր տունը:




## GOSPEL READING

Luke 1:39-56

**A**nd Mary arose in these days and went into the hill country with haste, into a city of Judah; and entered into the house of Zacharias and saluted Elisabeth. And it came to pass, when Elisabeth heard the salutation of Mary, the babe leaped in her womb; and Elisabeth was filled with the Holy Spirit; and she lifted up her voice with a loud cry, and said, Blessed [art] thou among women, and blessed [is] the fruit of thy womb. And whence is this to me, that the mother of my Lord should come unto me? For behold, when the voice of thy salutation came into mine ears, the babe leaped in my womb for joy. And blessed [is] she that believed; for there shall be a fulfilment of the things which have been spoken to her from the Lord.

And Mary said, My soul doth magnify the Lord, And my spirit hath rejoiced in God my Saviour. For he hath looked upon the low estate of his handmaid: For behold, from henceforth all generations shall call me blessed. For he that is mighty hath done to me great things; And holy is his name. And his mercy is unto generations and generations, On them that fear him. He hath showed strength with his arm; He hath scattered the proud in the imagination of their heart. He hath put down princes from [their] thrones, And hath exalted them of low degree. The hungry he hath filled with good things; And the rich he hath sent empty away. He hath given help to Israel his servant, That he might remember mercy (As he spoke unto our fathers toward Abraham and his seed for ever.

And Mary abode with her about three months, and returned unto her house.





# ԱՂՕԹՔ

Գրեց՝ Յովնան Արք. Տէրտէրեան



Յօղն եւ նորաբաշխ կեանքին, Աստուած մշտազօր. առաւօտեան արշալոյսի հետ արթնցող իմ կեանքիս վրայ իջած ցօղն եւ կենսատու, զի անով կ'ուզեմ յագեցնել նաեւ ծարարը իմ հոգիին: Յօղ բերեք ձեր սրտերուն, որպէսզի այդ դառնայ հոգեւոր սնունդ Ձեր կեանքին:

Իիծեալ հոգիիս լոյսն եւ Դուն, Աստուած իմ. Քանզի Քու խօսքը ճշմարիտ իմաստութեան աղբիւրներ կը հոսեցնէ իմ հոգիին մէջ: Հոգիս կը մերժէ տկարը, քանզի Դուն եւ բանալին նոր կեանքի եւ բուժիչ դեղը վիրաւոր հոգիներուն:

## PRAYER

By Archbishop Hovnan Derderian



**You are the dew of newly shared life, O Almighty God; you are the life-giving dew of my life awakened by the sunrise, for with that I wish to quench the thirst of my soul. O faithful, seek the Lord's dew in your lives and enliven your spiritual lives.**

**You are the light of my languishing soul, O My Lord God, for your word springs fountains of true wisdom in my soul. My soul rejects the weak for you are the key of new life and the healing remedy for wounded souls.**

## ASSUMPTION OF THE HOLY MOTHER OF GOD

The greatest feast exalting the Holy Mother of God is the Feast of the Assumption. It is also one of the five major feast days or *daghavars* of the Armenian Church (along with Theophany, Easter, Transfiguration, and the Exaltation of the Holy Cross).

Historic data tells us that St. Mary lived in Jerusalem about fifteen years after the resurrection and then died. Eastern tradition tells us that at her death an elaborate funeral took place. The apostles, with the exception of St. Bartholomew, buried her with great reverence in the Garden of Gethsemane. For three days and three nights angelic singing was heard over her tomb. Then the apostles saw a vision of Jesus coming down from heaven and taking his mother up from the grave to be with Him in heaven.

When Bartholomew arrived, he wanted to see Mary for the last time. The apostles took him to the tomb, and to their amazement, found it empty. They were convinced that her body had been taken up into heaven by the Lord. This belief was sanctioned by the church between the 9th and 12th centuries.

The Armenian Church observes this feast for nine days as ordered by St. NersesShnorhali, who also composed most of the *sharagans* (hymns) of the feast. The *sharagans* dedicated to *Asdvadzadzin* are among the most poetic and beautiful of our hymnal. On this day, following the celebration of the Divine Liturgy, the blessing of grapes takes place.

Even though there is no law that we offer to God all first fruits with blessings, it is a good custom. Since it would be impractical to bless each fruit separately, grapes, as the noblest of fruits and the essence of joy-inducing wine (also a symbol of communion), are blessed in place of all other fruits, in keeping with established ritual. The day of the blessing of grapes is the feast of *Asdvadzadzin* (Mother of God) not because of any theological connection, but for the convenience of the season and the grape harvest. In the southern provinces where fruits ripen earlier, the custom of observing the blessing of grapes at *Vartavar* (Transfiguration) and even earlier dates has been adopted.

In the Garden of Gethsemane in Jerusalem, there is the Church of the Virgin Mary which contains her tomb. The Armenians and Greeks oversee this church. It is a lovely church, and one enters by means of a long, broad staircase which leads down into the church proper. No other denomination may celebrate Divine Liturgy there without the permission of the Armenian and Greek churches.

## ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին մեծ շուքով եւ հանդիսաւորութեամբ նշում է Սուրբ Աստուածածնի Վերափոխման տօնը: Այն Հայ Եկեղեցու հինգ տաղաւար տօներից չորրորդն է եւ Տիրամօր ընտիրուած տօներից ամենահինը:

Աւանդութեան համաձայն՝ Սուրբ Կոյսը Յիսուս Քրիստոսի խաչելութիւնից յետոյ ապրել է Երուսաղէմում, Ս. Յովհաննէս Աւետարանչի խնամատարութեաններքոյ: Շուրջ 12 տարի Սուրբ Աստուածամայրը պահեքով յաճախ այցելել է իր սիրասուն Որդու գերեզման ու անդադար աղօթել: Այդ այցելութիւններից մէկի ժամանակ էլ նրան է յայտնուել Գաբրիէլ հրեշտակապետն ու աւետել երկրային աշխարհից Վերին Երուսաղէմ վերափոխուելու լուրը:

Սուրբ Աստուածածինն էլ այս բարի լուրը յայտնել է իր ազգականներին ու միւս բոլոր քրիստոնէաներին՝ պատուիրելով, որ իրեն թաղեն Գեթսեմանիի ձորակում: Սուրբ Կոյսը նաեւ պատուիրել է Ս. Յովհաննէս առաքեալին, որ վերջինս Սուրբ Պատարագ մատուցի, որպէսզի ինքը վերջին անգամ Սուրբ Հաղորդութիւն ընդունի: Հաղորդուելուց յետոյ Սուրբ Աստուածամայրը գնացել է վերնատուն: Երբ առաքեալները շրջապատել են Տիրամօր մահիձը, աննկարագրելի մի լոյս է երեւացել: Սենեակի վերելում յայտնուել է Քրիստոս՝ հրեշտակների զօրքերով: Տեսնելով իր Որդուն՝ Սուրբ Աստուածամայրն աւանդել է հոգին:

Սուրբ Կոյսի երկրային կեանքի վախճանը Եկեղեցին «ննջում» եւ ոչ թէ «մահ» բառով է որակում՝ հասկանալի դարձնելու նրա երկինք փոխադրուած լինելը: Ս. Բարթոլոմէոս առաքեալը, որ ներկայ չէր յուղարկաւորութեանը, վերադառնալով Երուսաղէմ, ցանկանում է վերջին անգամ տեսնել Աստուածամօրը:

Առաքեալները նրա խնդրանքով բացում են գերեզմանը, սակայն Սուրբ Կոյսի մարմինն այնտեղ չի լինում: Դա նշանակում էր, որ Յիսուս իր խոստման համաձայն երկինք էր փոխադրել Իր մօրը:

Հայ եկեղեցին դարեր շարունակ խորին յարգանք էլ երկիւղածութիւն է տածում Սուրբ Աստուածամօր հանդէպ՝ շեշտելով Աստուծոյ մայր լինելու հանգամանքը, մաքրակենցաղութիւնը, անօրինակ խոնարհութեան ոգին, առաքինի վարքն ու նուիրուածութիւնը:

Իսկ հայ կնոջ համար ՍուրբԿոյսնառաքինի, հաւատաւոր մօր, ընտանեկան սրբութեան պահապանի մարմնացումն է:

Սուրբ Աստուածածնի Վերափոխման տօնին, Սուրբ Պատարագից յետոյ կատարում է խաղողօրհնէքի արարողութիւն: Օրհնում է նաեւ տարուայ ողջ բերքն ու բարիքը:



## Stories.- Potatoes, Eggs, and Coffee Beans

Once upon a time a daughter complained to her father that her life was miserable and that she didn't know how she was going to make it. She was tired of fighting and struggling all the time. It seemed just as one problem was solved, another one soon followed.

Her father, a chef, took her to the kitchen. He filled three pots with water and placed each on a high fire. Once the three pots began to boil, he placed potatoes in one pot, eggs in the second pot, and ground coffee beans in the third pot.

He then let them sit and boil, without saying a word to his daughter. The daughter, moaned and impatiently waited, wondering what he was doing.

After twenty minutes he turned off the burners. He took the potatoes out of the pot and placed them in a bowl. He pulled the boiled eggs out and placed them in a bowl.

He then ladled the coffee out and placed it in a cup. Turning to her he asked. "Daughter, what do you see?" "Potatoes, eggs, and coffee," she hastily replied.

"Look closer," he said, "and touch the potatoes." She did and noted that they were soft. He then asked her to take an egg and break it. After pulling off the shell, she observed the hard-boiled egg. Finally, he asked her to sip the coffee. Its rich aroma brought a smile to her face.

"Father, what does this mean?" she asked.

He then explained that the potatoes, the eggs and coffee beans had each faced the same adversity— the boiling water.

However, each one reacted differently.

The potato went in strong, hard, and unrelenting, but in boiling water, it became soft and weak.

The egg was fragile, with the thin outer shell protecting its liquid interior until it was put in the boiling water. Then the inside of the egg became hard.

However, the ground coffee beans were unique. After they were exposed to the boiling water, they changed the water and created something new.

"Which are you," he asked his daughter. "When adversity knocks on your door, how do you respond? Are you a potato, an egg, or a coffee bean?"

**Moral:** In life, things happen around us, things happen to us, but the only thing that truly matters is what happens within us.

Which one are you?





## HOME BLESSING

**T**he home is a sacred place where family members maintain and share many values. It is also a place where they are charged and empowered with these values to live a peaceful and God-pleasing life. It is under this roof that all collectively form oneness in spirit and assume an important responsibility in the life of the community. It is in this place where they break bread and share joys and sorrows. Here the presence of the Omnipotent is felt since every family is a miniature of a "Little Church—Ecclesia." In this "Little Church" the inexhaustible love and the very generous blessing of God permeate.

For Home Blessing the priest takes with him wafer and incense, and blesses the bread, the water and the salt provided by the family. These three fundamental elements are essential life-giving gifts for human life. The priest asks from the Omnipotent God not to lessen these three gifts without which life becomes impossible or imperfect.

The bread, the water and the salt are symbols of God's infinite goodness and care. With the blessing of these great gifts the household is enriched spiritually and its existence perpetuated for the service of his Creator. Along with the bread, salt, and bread offered on a tray by the dwellers, the priest places also the wafer stamped with a crucifix and designs of grapes and wheat. The wafer is the presence of Christ in the home. The members of the family can either distribute the wafer among themselves or keep it in a jar along with flour, salt, or rice.

During Home Blessing it is customary to burn incense which symbolizes the burning of our souls with our Lord's love. In his supplication the Psalmist says, "Let my prayer be counted as incense before Thee." Through this ceremony everyone's faith is replenished and strengthened and the Lord's presence is felt.

FOR HOME BLESSING, PLEASE CALL  
FR.MASHDOTS KESHISHIAN AT (818) 293-9098.

# DONATE FOR ALTAR FLOWERS

One way to celebrate the life of a loved family member or a friend is to donate either altar flowers for the Divine Liturgy.

Donations may be made by individuals or families for various occasions, such as name days, birthdays, anniversaries or on the occasion of a Requiem Service (Hokehankist).

## Մ. ԽՈՐԱՆԻ ԾԱՂԻԿՆԵՐ

Ի յիշատակ Ձեր գերդաստանի հին եւ նոր ննջեցելոց, Մ. Խորանը զարդարելու համար ծաղիկների նուիրելը վաղեմի սովորություն է մեր եկեղեցում: Նպատակ ունենալով վերականգնել այս գեղեցիկ բարեպաշտական աւանդոյթը՝ քաջալերում ենք, որ Ձեր սրտաբուխ նուիրատուութիւններով մասնակից դառնաք:



## Խաղողօրհնէքի իմաստը

Հարցում.- Ինչո՞ւ խաղող բերաւ հայ եկեղեցին Աստուածածնայ տօնին:

1.- Որովհետեւ յիշենք սիրելիներ, խաղողը խորհրդաւոր խորհրդանիշներ կը կրէ իր մէջ: Խաղողը նախ անոր համար որ, ջրհեղեղէն նոյեան տապանը հանգչեցաւ Արարատ լեռան վրայ, եւ Նոյ նահապետ իջաւ տապանէն, առաջին բանը որ երկրի վրայ ցանեց ինչն է՞ր: Որթատունկը, խաղողը:

2.- Յիսուս ինք ըսաւ.- «Ես եմ ճշմարիտ որթատունկը» (Յհ.15): Խաղողէն ի՞նչն է որ կը պատրաստուի՞, գինին: Իսկ գինին ի՞նչ կը խորհրդանշէ՞, Տէր Յիսուս Քրիստոսի արիւնը, եւ այս իմաստով սիրելիներ, խաղողի օրհնութիւնը կը կատարենք Աստուածածնայ տօնին, որովհետեւ ո՞վ էր որ աշխարհ բերաւ ճշմարիտ որթատունկը, Աստուածամայր Ս. Մարիամը որ Յիսուս Քրիստոսը աշխարհ բերաւ: Անոր համար է որ կը կատարենք խաղողի օրհնութիւն:

Նաեւ ըսեմ որ Յիսուս կանայի հարսանիքին ընթացքին ջուրը գինիի փոխեց, անիկա խորհրդանշելով, որ տէր Աստուած, թող մեր կեանքի նեղութիւնները, դժուարութիւնները, որ ջուրերու նման կը ճնշեն մեր հոգիներուն մէջ, եւ տէր Յիսուս Քրիստոս ինք կու գայ մեր կեանքին մէջ, կը քաղցրացնէ, քաղցրահամ գինիի կը վերածէ:

Մաշտոց Քինյ. Քէշիշեան



# The Meaning of the Grapes

**It is important to know the meaning of the grapes!**

**Question: Why does the Armenian Church do the blessing of the grapes on the Day of the Assumption of the Holy Mother-Of-God?**

**1.Let's remember, my dears - the grapes have spiritual meaning in them. First of all because when Noah came out of the ark after landing on the Mountain Ararat when the Great Flood was over, the first thing he planted on the earth was a vineyard.**

**2.Jesus himself said: -"I'm the true vine" (John 15). What is made out of grapes? Wine! And what does wine symbolize? It represents the blood of Jesus Christ. Therefore, my dears, the blessing of the grapes takes place on the Day of the Assumption of the Holy Mother-Of-God, as Saint Mary was the one to give birth the true wine, our Jesus Christ!**

**When the wine runs out during the wedding at Cana, Jesus delivers a sign of his glory by turning water into wine - meaning that Jesus Christ came to sweeten our lives, converting the worries and difficulties, that pressure our souls like water, into sweet wine.**

***Ter Mashdots Keshishyan***





ՄԵՌԵԼՈՅԻ ԵՒ ԳԵՐԵՋՄԱՆՈՐՀՆԷՔԻ  
ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՂԵՑԻԿ ԱՌԱՆԴՈՒԹԻՒՆԸ



Հայ Եկեղեցւոյ օրացոյցին համաձայն հինգ Տաղաւարներու յաջորդող Երկուշաբթի օրերը կը կոչուին Մեռելոց, այսինքն՝ մեր հանգուցեալներու յիշատակը հաւաքական կերպով յարգելու սահմանուած յատուկ օրեր: Տարուան 365 օրերու հետեւո ընթացքը մեր աչիքն առջեւ ունենալով, երբ յաճախ ապրողներս ալ զիրար ալ կը մոռնանք, կը տեսնենք՝ որ մեր Հայրերու կարգադրութիւնը որքա՛ն իմաստուն է: Արդարեւ, այդ օր մեզմէ բաժնուած հարազատները կը դառնան մեր կեանքին առանցքը՝ կը յիշենք զիրենք, կ'այցելենք անոնց մասունքներու երկրաւոր վերջին տաղաւարը, հաւատքի ու աղօթքի մարմով կը վերամիանանք իրարու, եւ կը բաժնենք կանխող մեծ տօներու խորհուրդն ու օրհնութիւնները: *Իրարու հետ բաժնել, միասին տօնել* եւ ոչ թէ միայն սգալ անոնց կորուստը. ահա ա՛յս է հիմնականին մէջ Մեռելոցի Օրուան հասկացողութիւնը:


Հայ Եկեղեցւոյ աստուածաբանութեան համաձայն Եկեղեցւոյ մաս կը կազմեն այս աշխարհի մէջ ապրող եւ այս կեանքէն մեկնած հաւատացեալները, ծանօթ՝ Զինուորեալ Եկեղեցի եւ Յաղթական Եկեղեցի անունով: Մենք եւ հանգուցեալները կը կազմենք մէկ ամբողջութիւն եւ կ'ապրինք հոգեւոր նոյն շրջանակին մէջ: Մենք կը հաւատանք, որ մեր հանգուցեալ սիրելիներու հոգիները կը շարունակեն ապրիլ մեր հետ՝ սպասելով մեր Տիրոջ երկրորդ Գալուստին: Յիսուս ըսաւ. «Ով որ իմ խօսքս գործադրէ՝ յաւիտեան պիտի չմեռնի» (Յովհ. 8.51): Մեր սիրելիները ապրեցան այս կեանքի մէջ հաւատալով Քրիստոսի եւ մեկնեցան այս աշխարհէն: Մենք կը յիշենք զանոնք ամէն օր, կը բախնք անոնց մարմաներէն, անոնց անունները կու տանք մեր գաւակներուն



հաւատալով՝ որ անոնք չեն կորսուիր մոռացութեան ու անէութեան մէջ, այլ մեր միջեւ եղող հոգեւոր կամութիւնը անխափան կը մնայ:

Մեռելոցի օրերուն մեր մեջեջեցեացիներու գերեզմաններուն վրայ կ'աղօթենք: Սա գեղեցիկ աւանդութիւն մըն է որ իր օգուտը ունի թէ՛ մեզի եւ թէ՛ հանգուցեալին համար: Մեր օգուտը այն է, որ մեզ կը զօրացնէ անդեմական կեանքի մեր հաւատքին մէջ՝ ի Քրիստոս մեջած մեր սիրելիներուն սէրը կենդանի պահելով մեր մէջ: Իսկ հանգուցեալի պարագային, ճիշդ է որ այս արարողութեամբ անոնք անմիջապէս դրախտ չեն մտներ, բայց կը հաւատամք սրտի խորքերէն առ Աստուած ուղղուած Աղօթքի ու աղաչանքի զօրութեան, որմէ կ'օգուտին ո՛չ միայն ողջերը այլեւ՝ մեռածները: Ամէն անոնք որոնք կը տարակուսին այս ճշմարտութեան, կրնան բանալ Աստուածաշունչ մատեանը եւ այնտեղ կարդալ՝ որ ողջերու սրտագինս աղաչանքներուն ընդառաջելով Բարեբարն Աստուած ոչ միայն միօրեայ մեռած Նայինի պատանին ու Յայրոսի դուստրը կեանքի կոչեց, այլ չորս օրուան թաղուած Ղազարոսին կեանք պարգեւեց: Միթէ Բարեգութիւն Աստուած որ մօր մը, հօր մը եւ ժողովրդի խնդրանքները անկատ չթողուց՝ մեռելները յարուցանելով, արդեօ՞ք պիտի անտեսէ մեջեջեցեացիներու մեղքերու թողութեան համար մեր աղաչանքները: Ահա թէ ինչու համար առեւտարակ հանգուցեալներու համար եղած աղօթքները՝ Հոգեհոն-գիստ թէ Գերեզմանօրհնէք, երբ կը կատարենք սրտաբեկ աղաչանքով, գիտակից հաւատով եւ բարեյոյս ակնկալութեամբ, խորքին մէջ Աստուծոյ խնամքին կը յանձնենք անոնց հոգիներ վստահելով՝ որ Իր անհուն սիրով Ան լաւագոյնս կը տնօրինէ:

Այս հաւատով, սիրելի հայրդդի, երբ Մեռելոցի օրը մօտ վառես հարագատներուդ շիրիմին վրայ, գայն վառէ խնդրելով որ Երկնաւոր Հայրը իր ողորմութեամբ վերաբերի անոնց հետ: Ս. Ներսէս Շնորհալիի խօսքերով Տէրը «ջնջէ» անոնց «յանցանքներու ձեռագիրը, եւ գրէ անոնց անունները կեանքի գիրքին մէջ», իր լոյսի խորաններուն մէջ ընդունելով անոնց հոգիները: Խնդրէ նաեւ, որ Աստուած լուսաւորէ բոլ միտքդ, որպէսզի բայես Իր Միածինին Խաչով բացուած մամբայէն, որ կեանքէն դէպի կեանք առաջնորդող ճշմարիտ մամբան է: Եւ փառք տուր Աստուծոյ, որ որպէս Հայ Քրիստոնեայ՝ մայրական արգանդէն քեզի այս կեանքին երաւիքիդ ետք, մահուամբ՝ երկրի արգանդէն քեզ ճշմարիտ եւ յաւիտեանական կեանքին պիտի առաջնորդէ:



## St. Kevork Armenian Apostolic Church

In celebration of the Assumption of the Holy Mother-Of-God, we will  
have a Holy Liturgy, Blessing of the  
Grapes & Luncheon provided by the Ladies Society  
Tickets: \$10 Adults, \$7 Children 5-12

On Sunday, August 18<sup>th</sup>, 2019

Blessing of the Grapes will take place in the end of the Holy Liturgy! We would like to invite you all to be present at this beautiful event & be a part of the day's blessings!

In accordance with the church's regulations, with the occasion of Assumption of the Holy Mother-Of-God, we will have no requiem memorial services that day.

## Ս. Գեորգ Հայց. Առաքելական եկեղեցի

9215 SE Church St, Clackamas, OR 97015

Ս. ԱՍՏՈՒԱԾԱՆԺՆԱՅ ՎԵՐԱԳՈՒՄԱՆ ՏՕՒՆ ԱՌԹԻՒ  
Ս. ՊԱՏԱՐԱԳԷ, ԽԱՂՈՂՈՐՀՆԷՔ ԵՒ ՀԱՒԱՔԱԿԱՆ ՄԻՐՈՅ ՀԱՇ  
ԿԻՐԱԿԻ, 18 ՕԳՈՍՏՈՍ 2019

Խաղողօրհներ՝ յաւարտ Ս. Պատարագի

Կը հրաւիրենք մեր հաւատացեալ ժողովուրդը ներկայ գտնուելու Ս. Պատարագին  
եւ խաղողօրհների հոգեպարար արարողութեան՝ հաղորդակից ըլլալու օրուան  
օրհնաբեր խորհուրդին:





# Community Meet & Greet and ANCA360 Presentation

**PORTLAND, OREGON**

**St. Kevork Armenian Church  
9215 SE Church St  
Clackamas, OR 97015  
Tuesday, August 20, 2019 at 7:00 PM**



**Armen Sahakyan**



**Liyah Babayan**



**Serob Abrahamian**

We look forward to meeting our vibrant Portland community to learn more about the local activities and initiatives. Join us to receive the latest updates on the wide-ranging 360 degree work of the ANCA Western Region in advancing the Armenian Cause on the federal, state, and local levels as well as explore avenues on how you can get involved too! Our special guest Liyah Babayan will discuss her book "Liminal: A Refugee Memoir" and have them available for purchase.

Q&A session will follow the presentation.

**#ANCAinAction**